քերն են դնում. փողոցը պիտի ծակեն. տասը յարկանոց տուն պիտի շինեն...

Ինչե՞ր չեն ասում:

— Մարգա՛ր աղա, դու որ ամէն բան դիտես, մի ասիր՝ տեսնենք ի՞նչ են շինում:

Մարգար աղան խորհրդաւոր ժպտում է:

— Դէ լա՛ւ, ականջիս ասիր, մեր մէջ կը մնայ:

Մասնաւոր վաճառականներ արտօնութիւն են ստացել, ռուսների հետ համաձայնութիւն են կապել ու ցիրկ են շինում:

— Կրկէ՞ս...Հայաստանո՞ւմ...

Մարգար աղան նայում է Արարատին, եւ ինքնագոհ ,երկարօրէն ժպտում է:

* * *

Պետական մեծ դաղտնիքը վաղուց տարածուել է:

Մտաւորականութիւնը մնացել է չուարած, չի իմանում ինչ մտածել: Սակայն, առանց համարձակելու քննադատել իշխանութեան որոշումը, որ միշտ էլ իմաստուն է, ոմանք փորձում են տրանջալ:

— Եղբայր, ամէն բան եղաւ, ցի՞րկն էր պակաս...

— Հը՛...բը՛...հը՛...

— Ինչպէ՞ս...

— Հա էլի...

Գոհ է պետական թատրոնի վարիչը: Իշխանութեան որեւէ ձեռնարկի առջեւ նա գոհ է:

— Առաջադիմութեան նշան է...տեսէք Մոսկուան... Լունաչարսկին գրել ա... Վրնաս թատրոնի՞ն՝ երբե՛ք: Ներդաշնակ մարմնի խաղը, ձիերը, ճկուն մկանների դեղեցկութիւնը... Վերջապէս, թող ռուս արտիստներն էլ դան տեսնեն, որ այստեղ երկիր կայ, որ ապրում է, գործում է, առաջադիմում է: Դո՛ւրս դանք յետամնաց դաւառի մեր հանդամանքից եւ բաց անենք մի պատուհան դէպի քաղաքակրթութիւնը...

Փրփուրը բերանին, բառերի կէսը ուտելով, կատաղօրէն ճառում է, պաշտպանում:

Իսկ այնտեղ, չէնքի մօտ, մի քանի բանուորներ քրտնատանջ աշխատում են: Անտաշ տախտակները բոլորաձեւ դամում են, սղոցում, աղմկում: Խուժանի լաճերը չորս կողմը պտտում են, անդուսպօրէն հետաքրքիր, ներս են մտնում, խանդարում, պատի վրայ ցցում, ապագայի համար ծակեր որոնում: Բանուորները հայհոյում են, քար նետում, սպառնում: Ի զո՛ւր: Նորից վերադառնում են, տախտակների վրայ խաղ անում, ցատկում, դամերն դողանում չուկայում ծախելու համար, փայտերը տանում՝ դիշերը վառելու համար:

— Աղպար, դա ի՞նչ փորձանք է, դա ի՞նչ փորձանք է...

Ու «փողբաչիները» վազում են տղոց ետեւից, փայտի կտորները յետ առնում, չընչասպառ դէս դէն նետում, պոռում, կանչում: Փո՛ղ են տուել ամէն մի կտոր փայտին, ամէն մի դամին ոսկի փո՛ղ են տուել:

— Շա՞ն որդիք...

Ժամը 5-ին, Արովեանի վրայ ման եկող ժողովուրդը փողոցը ծռում է, չէնքի առջեւ երկար կանգ առնում:

— Ընկեր, ի՞նչ են շինում:

— Ցիրկ:

— Հը՛...

* * *

Խողը եկել է Հայաստան:

Նախ այդպէս էր: Առաւօտեան մօտ, երբ աշակերտ ու աշակերտուհի աչքերը ճմռելով դպրոց էին վազում, երբ կաչուէ ծրարները թեւերի տակ պաշտօնեաները ոտքերը քարշ տալով, ծուլօրէն կանգ էին առնում հիմնարկութիւնների առջեւ, երբ խանութպանները դռների վրայ չորացած ձուկերն էին կախ անում, երբ Մարգար աղայի սրճարանում մի քանի պատասխանատու ընկերներ ձուկ էին ուտում եւ թէյ խմում, երբ Նորքի կողմից գիւղացիներ էին իջնում ձեռքերնին մի քիչ մածուն եւ մի քիչ եղ բռնած, մի մարդ՝ ուսերը լայն, դեղին փոքրիկ մօրուք, մորթէ գլխարկ՝ կարմիր թռուցիկներ էր բաժանում:

Հետաքրքրուած ամէն մարդ կարդում էր:

Թռուցիկի մէջ ասուած էր.—

ՀԵՌԱԳԻՐ

Ուրախ լուր! ուրախ լուր! ուրախ լուր!

ԵՐԵՒԱՆՑԻՆԵՐ,

Այսօր ժամը 4-ին, կէսօրից յետոյ, Խորհրդային Հայաստան նոր եկած Կրկէսի խում-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան